Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԵՐԿԼԵՁՈՒ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BILINGUAL BULLETIN

1: Today's Scripture Reading, 31st August 2025 Bulletin 37/2025

Second Sunday after the Assumption of the Holy Mother of God—Feast of the Discovery of the Belt of the Holy Theotokos

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ 2 ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐԻՆ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 1:1-12

Պօղոս, Աստուծոյ կամքով Յիսուս Քրիստոսի առաքեալը, ու Տիմոթէոս մեր եղբայրը, Կորնթոսի մէջ եղած Աստուծոյ եկեղեցիին եւ Աքայիայի մէջ եղող բոլոր սուրբերուն.
շնորհք ու խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, եւ Տէր Յիսուս Քրիստոսէ:

Օրհնեա՛լ ըլլայ Աստուած, մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հայրը, արգահատանքի Հայրը եւ ամէն մխիթարութեան Աստուածը, որ կը մխիթարէ մեզ մեր ամբողջ տառապանքին մէջ, որպէսզի մենք կարենանք մխիթարել անոնք՝ որ որեւէ տառապանքի մէջ են, այն մխիթարութեամբ՝ որով մենք կը մխիթարուինք Աստուծմէ. որովհետեւ ինչպէս Քրիստոսի չարչարանքները կ'առատանան մեր մէջ, նմանապէս մեր մխիթարութիւնն ալ կ'առատանայ Քրիստոսի միջոցով: Եթէ տառապինք՝ ձեր մխիթարութեան եւ փրկութեան համար է, որ արդիւնաւոր կ'ըլլայ՝ համբերելով այն նոյն չարչարանքներուն, որոնցմով մենք ալ կը չարչարուինք. ու եթէ մխիթարուինք՝ ձեր մխիթարութեան եւ փրկութեան համար է: Մեր յոյսը հաստատուն է ձեր վրայ, որովհետեւ գիտենք թէ ինչպէս հաղորդակից էք մեր չարչարանքներուն, նոյնպէս ալ մխիթարութեան պիտի ըլլաք:

Որովհետեւ չենք ուզեր, եղբայրնե՛ր, որ անգիտանաք Ասիայի մէջ մեզի պատահած տառապանքը. չափէն աւելի ծանրաբեռնուեցանք, մեր կարողութենէն աւելի, ա՛յնքան՝ որ նոյնիսկ յուսահատեցանք կեանքէն: Բայց մահուան վճիռը ունէինք մեր վրայ, որպէսզի վստահինք ո՛չ թէ մենք մեզի, հապա Աստուծոյ՝ որ մեռելները կը յարուցանէ: Ան այդպիսի մեծ մահէ մը ազատեց մեզ, ու կ'ազատէ. եւ կը յուսանք թէ ան տակաւին պիտի ազատէ: Դուք ալ կը գործակցիք՝ մեզի համար աղերսելով, որպէսզի շատեր շնորհակալ ըլլան մեր պատճառով՝ շատ անձերու աղօթքին միջոցով մեզի եղած շնորհին համար:

Արդարեւ սա՛ է մեր պարծանքը՝ մեր խղճմտանքին վկայութիւնը, թէ մենք՝ պարզամտութեամբ եւ Աստուծոյ անկեղծութեամբ, ո՛չ թէ մարմնաւոր իմաստութեամբ՝ հապա Աստուծոյ շնորհքով վարուեցանք աշխարհի մէջ, եւ ա՛լ աւելի ձեզի հանդէպ:

The Epistle of St Paul to the 2 Corinthians 1:1-12;

Paul, an apostle of Christ Jesus by the will of God, and Timothy our brother,
To the church of God in Corinth, together with all his holy people throughout Achaia:
Grace and peace to you from God our Father and the Lord Jesus Christ.

Praise to the God of All Comfort

Praise be to the God and Father of our Lord Jesus Christ, the Father of compassion and the God of all comfort, 4who comforts us in all our troubles, so that we can comfort those in any trouble with the comfort we ourselves receive from God. For just as we share abundantly in the sufferings of Christ, so also our comfort abounds through Christ. If we are distressed, it is for your

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

comfort and salvation; if we are comforted, it is for your comfort, which produces in you patient endurance of the same sufferings we suffer. And our hope for you is firm, because we know that just as you share in our sufferings, so also you share in our comfort.

We do not want you to be uninformed, brothers and sisters, a about the troubles we experienced in the province of Asia. We were under great pressure, far beyond our ability to endure, so that we despaired of life itself. Indeed, we felt we had received the sentence of death. But this happened that we might not rely on ourselves but on God, who raises the dead. He has delivered us from such a deadly peril, and he will deliver us again. On him we have set our hope that he will continue to deliver us, as you help us by your prayers. Then many will give thanks on our behalf for the gracious Favor granted us in answer to the prayers of many.

Paul Writes to Corinthians

Paul's Change of Plans

Now this is our boast: Our conscience testifies that we have conducted ourselves in the world, and especially in our relations with you, with integrity b and godly sincerity. We have done so, relying not on worldly wisdom but on God's grace.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ 4:35-40

Նոյն օրը՝ երբ իրիկուն կ'ըլլար, ըսաւ անոնց. «Եկէ՛ք ծովուն միւս եզերքը անցնինք»:

Անոնք ալ բազմութիւնը արձակելով՝ առին զինք, քանի նաւուն մէջ էր. ուրիշ նաւակներ ալ կային անոր հետ: Ու հզօր փոթորիկ մը եղաւ եւ ալիքները նաւուն վրայ կը խուժէին, այնպէս որ արդէն կը լեցուէր. իսկ ինք՝ նաւուն ետեւի կողմը՝ բարձի վրայ կը քնանար: Արթնցուցին զինք եւ ըսին իրեն. «Վարդապե՛տ, հոգ չե՞ս ըներ՝ որ կը կորսուինք»: Ուստի ելլելով՝ սաստեց հովը եւ ըսաւ ծովուն. «Դադրէ՛, լո՛ւռ կեցիր»: Հովը դադրեցաւ, ու մեծ խաղաղութիւն եղաւ: Ըսաւ անոնց. «Ինչո՞ւ այդպէս երկչոտ էք. ի՞նչպէս կ'ըլլայ՝ որ հաւատք չունիք»:

The Holy Gospel of Jesus Christ according to Mark 4:35-40

Jesus Calms the Storm

That day when evening came, he said to his disciples, "Let us go over to the other side." Leaving the crowd behind, they took him along, just as he was, in the boat. There were also other boats with him. A furious squall came up, and the waves broke over the boat, so that it was nearly swamped. Jesus was in the stern, sleeping on a cushion. The disciples woke him and said to him, "Teacher, don't you care if we drown?"

He got up, rebuked the wind and said to the waves, "Quiet! Be still!" Then the wind died down and it was completely calm.

He said to his disciples, "Why are you so afraid? Do you still have no faith?"

Christ Stills the Tempest

Dear Parishioners and Armenian Community Members:

The Sunday collection plate circulating during Divine Liturgy is for all to contribute each Sunday in order to have a thriving church. Our Lord Jesus Christ told us in Matthew 17:24-27. Your donation, participation and support is vital, not only by attending the church but also with your time and financial contribution to our church. Please be generous and help to keep the doors of the St Yeghiche Armenian Church open and provide all the services.

Սուրբ առաքյալների՝ Հակոբոսի և Ծմավոնի հիշատակության օր

Ս. Հակոբոս առաքյալը Զեբեդյան Հակովբոսից տարբերվելու համար «Ալփյան և Կրտսեր Հակոբոս» է կոչվում: Հակոբոս Ալփյան առաքյալն Ավետարանը քարոզել է Պաղեստինի հարավային ծովեզերքում և Եգիպտոսում, ուր և նահատակվել է:

Ս. Ծմավոն կամ Սիմոն առաքյալն իր նախորդի՝ Հակոբոսի նման միայն հանվանե է հիշատակվում Ավետարանի մեջ: Հայտնի է նաև Կանանացի անունով, որ նշանակում է նախանձահույզ: Այս անունով մի խմբակցություն կար հրեաների մեջ, որն առանց միջոցների մեջ խտրականություն դնելու, պայքարում էր օտար՝ հռոմեական լուծը թոթափելու և ուրացող կամ օտարամոլ հրեաներին վերացնելու համար: Սիմոն Կանանացին քարոզել և նահատակվել է Պարսկաստանում:

Commemoration of Sts. James and Simon Apostles

In order to differ St. James Apostle from James, the son of Zebedee, he is named “James son of Alphaeus” and “James Junior”. The Apostle James son of Alphaeus has preached the Gospel in the Southern parts of Palestine and in Egypt, where he has been martyred.

St. Simon the Patriot Apostle is famous as “Simon of Canaan”, which also means “Zealous”. There was a grouping with that name among the Jews, who without making distinctions between means struggled against the foreign Roman yoke and for eliminating the betraying and fond of foreigners Jews. St. Simon has preached and has been martyred in Persia.

Ս. Թովմա առաքյալի հիշատակության օր

Ս. Թովմա առաքյալը, ում Երկվորյակ էին անվանում, հայտնի է Ավետարանի այն դրվագից, երբ մյուս առաքյալներն ասում էին, թե տեսել են հարուցյալ Քրիստոսին, Թովման պնդում էր, թե կհավատա միայն այն ժամանակ, երբ իր աչքերով տեսնի և իր ձեռքը մխրճի Հիսուսի խոցված կողի մեջ: Թերահավատ առաքյալին հաջորդ շաբաթ, Վերնատան մեջ, հայտնվում է Հիսուսը: Թովման, հավատալով կատարված հրաշքին, ծունկի է գալիս և խոստովանում. «Տե՛ր իմ և Աստված իմ» (Հովհ. 20: 28): Երբ մյուս առաքյալները վարանում են Քրիստոսի հետ գնալ մահացած Ղազարոսին տեսնելու, քանի որ քարկոծվելու մեծ վտանգ կար, Թովման համարձակորեն ասում է. «Եկե՛ք մենք էլ գնանք, որ նրա հետ մեռնենք» (Հովհ. 11:16): Ըստ ավանդության՝ Թովման քարոզել է Աստծո խոսքը Պարթևաստանում և Հնդկաստանում, նետահարվելով նահատակվել ու թաղվել է Մադրաս քաղաքում:

Commemoration of St. Thomas

St. Thomas Apostle (called the Twin) is known from the passage of the Gospel where the other Apostles state that they have seen Rosen Christ, whereas Thomas insists that he won’t believe unless he sees the scars of nails in His hands and puts his fingers on those scars and his hand in His side. A week later Jesus appears in the indoors to the untrusting Apostle. Thomas, believing the miracle, kneels down and says: “My Lord and my God!” (The Gospel according to John 20: 24 -29). When the remaining Apostles hesitate to go with Christ to visit dead Lazarus, as there was a great danger to be stoned, Thomas bravely says to his fellow disciples, “Let us all go along with the Teacher, so that we may die with him!” (The Gospel according to John 11:16).
According to the tradition St. Thomas Apostle has preached the Word of God in Parthia and India, and has been martyred and buried in Madras.

Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

ՄԱՅՐ ՍՈՒՐԲ, ԲԱՐԵԽՕՍԵԱ՛

«Աղաչեա՛ վասն մեր զառ ի քէն զմարմնացեալն Աստուած, զի լռեսցին պատերազմունք, դադարեսցին յարձակմունք թշնամեաց, տնկեսցի սէր եւ արդարութիւն ի յերկրի. աղաչեմք» (Աղաչում ենք, աղաչիր մեզ համար քեզանից մարմնացած Աստծուն, որ լռեն պատերազմները, դադարեն թշնամիների յարձակումները, երկրում սէր եւ արդարութիւն հաստատուի. ԺԱՄԱԳԻՐՔ, Առաւօտեան ժամերգութիւն):

Սիրելի եղբայրներ եւ քոյրեր ի Քրիստոս,

Անդրադարձե՞լ էք, թէ որքան շատ տօներ են նուիրուած Սուրբ Աստուածածնին, որով յայտնի երեւում է, թէ որքան սիրուած եւ մեծարելի է Տիրամօր կերպարը եղել եւ մնում Ընդհանրական Եկեղեցում: Յայտնի է, որ մեր Փրկչի Մօրը՝ Սուրբ Կոյս Մարիամին նուիրուած եօթը տօներ կան մեր եկեղեցում: Մենք սուրբ Պատարագի առաջին աղօթքն անգամ մեծ Սրբուհու բարեխօսութեանը դիմելով ենք ասում՝ շատերիդ հարազատ սկիզբով. «Եւ վասն սրբուհւոյ Աստուածածնի բարեխօսութեանն, Տէ՛ր, ընկալ զաղաչանս եւ կեցո զմեզ» («Տէր, մեր աղանչանքներն ընդունի՛ր եւ կեա՛նք տուր մեզ յանուն սրբուհի Աստուածածնի բարեխօսութեան»): Բուրվառակիր սարկաւագը էլ կոչ է անում ժողովրդին, որ երկնքում Հօր առաջ բարեխօս ընդունենք Սուրբ Աստուածածնին եւ բոլոր սուրբերին, որպեսզի Տէրը կամենալով ողորմի եւ գթալով փրկի մեզ՝ ազդարարելով սա «Սուրբ զԱստուածածինն եւ զամենայն սուրբս բարեխօս արասցուք առ Հայր ի յերկինս…» երգեցիկ քարոզով:

Պատարագի ընթացքում եւս, երբ բոլոր սպասարկող սարկաւագները եւ դպիրները սուրբ Սեղանի աջակողմն են կանգնում՝ իբրեւ Տիրոջ Աջակողմում եղող սուրբերի մասին յիշեցում, կրկին առաջինը Տիրամօր անուան յիշատակումն է. «Աստուածածնի Սրբոյ Կուսին Մարիամու եւ Յովհաննու Մկրտչին եւ սրբոյն Ստեփաննոսի Նախավկային եղիցի յիշատակ ի սուրբ պատարագս, աղաչեմք»:

Չէ՞ որ աստուածային Պատարագը ամբողջ Եկեղեցու՝ ե՛ւ ողջերի, ե՛ւ ննջեցեալների համար է, որոնց մէջ, իբրեւ արթուն եւ կենդանի բարեխօսներ, առաջին հերթին յիշում ենք Սուրբ Աստուածածնին:

Մայրութեան իւրատեսակ ներբող է Աստուածածնի ամէն տօն: Գնահատանք, խոնարհում եւ մեծարանք մայրութեան, ծնողական սիրոյ եւ նուիրումի: Խաչի վրայ Փրկչի բառերը՝ ուղղուած իր սիրելի աշակերտ Յովհաննէսին. «ահա քո Մայրը», իբրեւ հասցէատէր ունի նաեւ իւրաքանչիւր քրիստոնեան: Քրիստոսի Մայրը մայր է բոլոր նրանց, որոնք Քրիստոսի անունով մկրտուել են, Փրկչի անուան կրողն են, քրիստոսական են եւ քրիստոսասէր:

Այս տօները իւրովի խոնարհում են նաեւ Մայր Եկեղեցուն, քանի որ առաջին դարերին շատ սերտ ու նոյնական էին Մայր Աստուածածնի եւ Մայր Եկեղեցու՝ իբրեւ հաւատքային ծնող ընկալումները: Սրանով է բացատրւում այն օրինաչափութիւնը, որ Հայաստանեայց բոլոր եկեղեցիների աւագ խորանները Սուրբ Աստուածածնի անունով են: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պատմական խորքերը քննելիս էլ տեսնում ենք, որ Մայր Տաճարը կոչւում է Կաթողիկէ Սուրբ Աստուածածին: «Կաթողիկէ» նշանակում է «ընդհանուր», որով յայտնի է այն միտումը, որ այն բոլորի, համայն հաւատացեալ ժողովրդի ընդհանրական մայրն է, որ իր հոգեւոր արգանդից սուրբ աւազանի ջրով ծնել է Աստուծոյ զաւակներ:

Շատ հայորդիներ բերանացի կյիշեն դեռ հեռաւոր 5-րդ դարում համազգային-եկեղեցական ժողովում սուրբ Վարդանանց սահմանումը, որ գրի է առել սուրբ Եղիշէ վարդապետը. «…մեզ հայր ենք ճանաչում Սուրբ Աւետարանը եւ մայր՝ Առաքելական կաթողիկէ Եկեղեցին..»: Հօր խօսքի սերմով է ծնւում զաւակը: Գարեգին Ա. հայրեպետի որակմամբ. «Հայրն է զաւակներին տալիս ընդհանուր ուղղութիւն, նրանց մէջ ներարկում ապահովութիւն ու պաշտպանուածութեան զգացում: Մայրը, այսինքն՝ Եկեղեցին, իր հոգու քնքշութեամբ սնում է երեխաների յուզական աշխարհը եւ անջնջելի հետք թողնում նրանց բարոյական նկարագրի ձեւաւորման վրայ:

Ուրեմն, մեր ազգային գիտակցութիւնը, մեր մշակոյթը եւ հոգեւոր կեանքը արարուել եւ ձեւաւորուել են միմեանցից անբաժան այդ ծնողների՝ Աւետարանի եւ Եկեղեցու շնորհիւ»:

Այժմ հերթը մերն է, որ մեր զաւակների հայեացքը դարձնենք դէպի անմահութեան գաղտնիք բացայայտող եւ հոգու փրկութեան առաջնորդող սրբազան այս երկու

հենասիւները՝ իրենց եւս մեր հայրերի պէս երկնքի ուխտաւոր եւ Աստծո ապրող զաւակներ դարձնելով:

Սուրբ Աստուածածնի, մեր զօրաւոր եւ շնորհալի սուրբ Հայրերի բարեխօսութեամբ Տէրը ողորմի, օրհնի ու խաղաղ պահի մեր Հայրենիքը, Աւետարանի խօսքով հաստատուն դարձնի մեր Եկեղեցին եւ փրկութեան ճանապարհի վրայ անշեղ պահի մեզ ամենքիս. ամէն:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան

DAILY BIBLE READINGS FOR 2025 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

1 September	Sts. Stepanos Oolnya, and the Martyrs Koharinos, Radigos, Dzamitos, Dookigos Proverbs 10:1-7; Isaiah 44:24-26; Hebrews 4:11-15; Mathew 5:1-12
2 September	The Holy Prophets Ezekiel, Ezra, and Zachariah, the father of John the Baptist Ezekiel 18:30-32; 1 Corinthians 2:6-10; Matthew 23:34-39
3 September	2 Corinthians 3:4-17; Mark 6:45-56
4 September	Sts. John the Baptist and Job the Righteous Proverbs 20:6-22; Job 42:12-16; Lamentations 3:22-56; Acts 13:25-33; James 5:7 -11; Matthew 14:1-12
5 September	2 Corinthians 5:6-18; Mark 7:24-30
6 September	The 318 Fathers of the Holy Council of Nicea (325 AD) Ezekiel 44:23-24; Hebrews 12:1-7; John 14:25-31

Հիշատակ Ս. Աստվածածնի գոտու գյուտի

Ս. Աստվածածնի գոտու գյուտը Տիրամորը նվիրված Հայ Առաքելական Եկեղեցու յոթ տոներից է: Մի հանգամանք, որն ակնհայտ կերպով ցույց է տալիս Ս. Կույսի՝ հայ ժողովրդի հոգևոր կյանքում ունեցած կարևոր և նշանակալից տեղի ու դերի մասին: Նա, որպես մայրության և առաքինության կատարյալ օրինակ, դարեր ի վեր իր այդ հատկանիշներով կերտել ու ձևավորել է հայ օրիորդի, կնոջ և մոր նկարագիրն ու դիմագիծը՝ միաժամանակ հրաշագործություններով այսօր էլ շարունակում է իր կենդանի ներկայությունն ու ներգործությունն ունենալ մեր կյանքում: Արկադիոս կայսեր օրոք (395 - 408թթ.) Երուսաղեմում էր գտնվում Ս. Աստվածածնի գոտին, որը հատուկ ուշադրությամբ և հարգանքով տարվում է Կ. Պոլիս: Այստեղ հավատացյալները մեծ երկյուղածությամբ այն զետեղում են եկեղեցում: Հույները հետագայում Ս. Մարիամին նվիրված նոր եկեղեցի են կառուցում և գոտին դնում այնտեղ՝ հավատացյալների համար պաշտամունքի և տոնակատարության առարկա դարձնելով: Հայ իրականության մեջ Ս. Աստվածածնի գոտու գյուտի տոնը 1774 թվականին ներմուծել է Սիմեոն Երևանցի Հայրապետն՝ իր հրատարակած օրացույցի մեջ: Առհասարակ, Քրիստոսի Եկեղեցին թե՝ սրբերի մասունքների, թե՝ նրանց գործածած որոշ իրերի հանդեպ ունեցել է և այսօր էլ ունի յուրահատուկ վերաբերմունք: Աստվածաշունչը և եկեղեցական կյանքի փորձառությունը փաստում են, որ Ամենակարող Աստված իր զորությունը նաև այդ առարկաների միջոցով է արտահայտել: Սուրբգրային լավագույն վկայությունն այն դրվագն է, որտեղ ներկայացվում է, թե ինչպես մեռած մարդու դիակը, դիպչելով Եղիսե մարգարեի ոսկորներին, վերակենդանանում է (Դ Թագ. 13: 21): Ուստի, Եկեղեցին հարգանք ցուցաբերելով աստվածային զորությամբ օժտված իրերի նկատմամբ, դրանց միջոցով իր պաշտամունքն ու երկրպագությունն է մատուցում ճշմարիտ Աստծուն:

Feast of the Discovery of St. Mary's Box

According to tradition, while en route to Jerusalem on a pilgrimage, two Greek princes come across a chest that once belonged to St. Mary. In Galilee, they see a large crowd gathered in front of a Jewish woman's house. They inquire and find that the sick are being healed due to the inexplicable power of the chest. The princes bring the box to Constantinople and present it to the Patriarch, who places it in the Church of St. Mary. The Patriarch then establishes the Feast of the Discovery of St. Mary's Box.

The Armenian Church celebrates this feast upon the order of the Catholicos Simeon from Yerevan, who accepted this tradition from the Greek Orthodox Church in the late 18th century.



ՏՕՆ ՍՈՒՐԲ ԽԱՉՎԵՐԱՑ **Կիրակի, Սեպտեմբեր 14, 2025**

Անոնք որոնք կը փափաքին Ս Խաչվերացի տօնին առթիւ իրենց սրտագին նուիրատուութիւնները ընել, թող հաճին մոտենալ Ծուխի Հոգաբարձութեան կամ հեռաձայնել եկեղեցւոյ գրասենեակը 020 7373 8133.

Ձեր ուխտը ընդունելի ըլլայ:

Exaltation of the Holy Cross **Sunday 14th September 2025**

All those Parish and Armenian Community members wishing to make monetary donations, on the occasion of Exaltation of the Holy Cross, please contact the Parish Council members at church or call parish office **020 7373 8133 .**

Thanking you in advance,
St Yeghiche Armenian Church Parish Council

Announcement

Organist / Keyboard Player Required

St Yeghiche Armenian Church Parish is looking to engage an enthusiastic Organist / Keyboard player to assist and enhance our Sunday Divine Liturgy and its glorification of our Lord.

The position entails playing on Sunday's Divine Liturgy, and other religious events throughout the Year.

Fees by negotiation – Immediate start

If interested please contact
Choirmaster Mr Aris Nadirian or
Parish Council Chairman Mr Viken Haladjian
by calling 020 73738133 or by emailing to
info@styeghiche.org.uk

The Church organ is the second largest in the country, lavishly carved and decorated with prefigures of Gothic architecture. It is noteworthy that Sir Arthur Seymour Sullivan, illustrious English composer was the first organist at St Yeghiche Armenian Church (previously known as St. Peter's Church) who played the first version of the existing organ from 1867 to 1871. .

Join St. Yeghiche Armenian Church Choir

Join us in the celebration of the Divine Liturgy, Badarak, at St. Yeghiche Armenian Church in Cranley Gardens. Deepen your faith and discover your talent as a choir member by learning the Armenian hymns and rituals. No prior experience or knowledge is needed. The choirmaster, Aris Nadirian, will help you build your confidence and proficiency in singing the liturgy.

We look forward to welcoming everyone to our choir. Your presence will expand and enrich our choir. For further details, please contact: services@styeghiche.org.uk or call church office on 020 7373 1833. Alternatively you may approach our Choirmaster after church service.

Serve the church and your community as a deacon, sub-deacon or acolyte

Join us in the celebration of the Divine Liturgy (Badarak) in the St Yeghiche Armenian church and become an altar server. Deepen your faith and discover your talents by learning the deacons' duties and singing the Armenian church hymns.

No prior experience or knowledge is needed. Our Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan will help you build your confidence and proficiency in singing and chanting.

Deacons and altar servers join the Primate and clergy during visits to mission parishes across the United Kingdom.

We look forward to welcoming everyone to serve as Deacons. Your presence will expand and enrich our altar. For further details, please contact: services@styeghiche.org.uk, or call church office on 020 7373 1833. Alternatively you may approach Fr Nshan after church service.

4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

There is No Memorial Service request for this Sunday

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

General

St Yeghiche Armenian Church is here to cater for all of your spiritual needs

Baptisms, Weddings, Baby Blessings, Home/Workplace Blessings, Seniors' Visitation, Hospitals/Home Visitation/Prayer, Funeral Service, Requiem, Grave Site Prayers, and more..

Please contact members of the Parish Council at Church every Sunday to request any of the above services. Alternatively, call Tel: 020 73738133 office, or write to Email: serices@styeghiche.org.uk

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan on 07548 777 147.

Hokehankist Requests: To request a requiem service and include details in our Sunday Bulletin, please contact us ***before Thursday Evening.*** Please contact Mr Viken Haladjian, or approach a member of Parish Council at church every Sunday after Badarak.

Tel: 020 7373 8133 office, 07970 146 280 mobile Email: services@styeghiche.org.uk

In Liu of Flowers: Friends and family of the deceased can make donations, in memory of their loved ones, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund.

Donations for prayers and annual membership contributions, in support of church's annual expenses, are welcome. Donations can be made;

-By a cheque made payable to "St Yeghiche Armenian Church Parish",
-By electronic bank transfer to "St Yeghiche Armenian Church Parish Ltd"
HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26
-By electronic card reader at the Church entrance.
-By QR Code directly to the Church PayPal or SumUp accounts.

PayPal Scan. Pay. Go.

Scan to Pay

St Yeghiche Armenian Church is a UK Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.

Membership: St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk